



Մոտենում է Հայոց Ցեղասպանության 100-ամյակը և այս կապակցությամբ Հունգարիայի հայկական համայնքի հովանավորությամբ կազմակերպում է տեսահոլովակի նկարահանում Արթինի և Ռադիչ Դեբորայի «Լսիր Լռության ձայնը» երգի հիման վրա, որը գրվել է նախորդ տարվա Ապրիլ ամսին:

Ստեղծագործական խումբը մտադրված է տեսահոլովակում նկարահանել հասարակ մարդկանց, հասարակական գործիչների, արվեստագետների, հայտնի և ոչ այնքան հայտնի դեմքերի, ովքեր հիշում են և ցավում Հայոց և ցանկացած այլ Ցեղասպանության զոհերի համար: Նկարահանումները տեղի կունենան Ապրիլ ամսին: Տեսահոլովակի վրա աշխատող ողջ անձնակազմը հրավիրում է բոլոր անշահախնդիր մարդկանց մասնակցություն ունենալ այս նոր ֆիլմի ստեղծմանը: Երգը ներկայացվում է անգլերեն և հունգարերեն լեզուներով, իսկ ավելի ուշ կլինի նաև հայերենով: Տեսահոլովակի միջազգային պրեմիերան տեղի կունենա 2013թ.-ի Ապրիլի 24-ին, իսկ մինչ այդ երգի համար գործում է ժամանակավոր հոլովակ, որը դուք կարող եք տեսնել այստեղ՝ [youtube}3GHi6nkkuXs{/youtube}](https://www.youtube.com/watch?v=3GHi6nkkuXs)

Մասնակցության հայտեր ներկայացնելու և հարցերի համար գործում է հետևյալ էլ. հասցեն՝ diaspora21@gmail.com

Գրել է armenians.hu
Ուրբաթ, 22 Մարտ 2013 10:38

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 31.03.2013թ.